

Հաշվետվություն

Արարատի մարզի Մրգավետ համայնքի ղեկավարի 2019թ-ի

առաջին կիսամյակում կատարած աշխատանքների

02.07.2019թ. Մրգավետ գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը վարում էր համայնքի ղեկավար Լ. Աբրահամյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար՝ Ն. Կարապետյանը: Հանրային լսմանը ներկա էին գյուղապետարանի

աշխատակազմը, դպրոցի տնօրեն՝ Ա.Թարվերդյանը, մանկապարտեզի վարիչ՝

Ն. Գևորգյանը, հայփոստի աշխատակիցը, բուժ. ամբուլատորիայի աշխատակցուհին:

Լսեցին- Մրգավետ համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2019թ. հուլիսի 2-ի

դրությամբ կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ առաջին կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները:

Գյուղապետարանում բնակչությունից ստացվել է 65 դիմումներ, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստի ժամանակ, և տրվել են համապատասխան լուծումներ:

2019թ. հուլիսի 2-ի դրությամբ գյուղապետարանը բնակիչներին տվել է 185 տեղեկանք, ստացել 90 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

2019թ. առաջին կիսամյակի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ: Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել են հողամասի չափազրման, սահմանների ճշգրտման, հողամասերի փոփոխման և ձևակերպման աշխատանքները:

Նշվեց անապահով ընտանիքներին, հարազատին կորցրած անձանց անհատույց հատկացումներ կատարելու մասին: Համայնքի սոց. անապահով ընտանիքներին տրվել է 1742,5(մեկ մլն. յոթ հարյուր քառասուններկու հազար հինգ հարյուր) դրամ, հարազատին կորցրած անձանց տրվել է 400,0(չորս հարյուր հազար) դրամ ֆինանսական աջակցում, աղբահանության աշխատանքների կազմակերպման հարցում հատկացվել է 1050,0 (մեկ մլն. հիթսուն հազար) դրամ:

2019թ առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների

1.Հողի հարկ – 1292,8

2.Գույքահարկ –5160,3

3.Տեղական տուրքեր –250

Համայնքի ղեկավար



Լ. Աբրահամյան